



# Հայցոցն սոյ ստեղծմաները

Էջմիածնի Ազգային եկեղեցական Համագումարը վերջացուցած է իր բոլոր աշխատանքները, բոլոր հարցերը լուծելով միաձայնութեամբ և խանդավառ ելույթներով:

Հայրապետի ընտրութենէն դուրս, Համագումարը մասնաւորաբար դրադած է Մայր Աթոռին բարեխաւան և բարդաւածման վերաբերեալ կարգադրութիւններով: Լիբանանի պատգամաւորներէն Ընկեր ՄԿՐՏԻՉ ՄՍՐՐԼԵԱՆ ՅԱՆՁՆ ԱՌԱՅ Է ԻՐ ԱՆՔՆ ԿԱՆ ԽՈՒՍԵՐՈՎ ՍԱՐԳՍԻՈՐԵԱ, ԷՋՄԻՍՄՆԻ ՀԱՄԱՐ, ԱՄԲՈՂՁ ՏՊՍՐԱՆ ՄԸ, որ ամբողջ Ս. Միութեան մէջ պիտի ըլլայ ոչ պետական և անկախ միակ տպարանը Ուսուցած է նաև բացումը Հոգեւոր ձեռնարանին, որուն դասընթացքները պիտի տեսնուին վեց տարի: Չանազան թեմեր, ինչպէս նաև պատգամաւորներ անձնագէտ, ստանձնած են հոգալ Ժողովուրդի սաներու վեցամեայ ծախսերը, տարեկան 500 տուար հաշուով: Վեհափառ Տ. Գարեգին Կաթողիկոսը, որ կը նախագահէր Ժողովին, Կիլիկիոյ Կաթողիկոսարանին անունով նսւիրած է 5000 տուար: Ակադեմիկոս Մալխասեան որդեգրած է մէկ սան: Ժողովին առաջին ատենապետը եղած է բանաստեղծ Ա. Իսահակեան: Բ. ատենապետները եղած են Բարեգործականի Եղիպտոսի շրջանային վարչութեան Բ. ատենապետ Պ. Ճանիկ Չազըր և Բարեգործականի Նիւ-Նորքի Կեդրոնական վարչութեան փոխ-ատենապետ Պ. Հայկ Գաւուզճեան:

## ՍՊԱՐԱՊԵՏ ՍԹԱԼԻՆ ԿԸ ԽՈՍՏԱՆԱԹ ԼԱՆՅՅԵՆԵԼ ՄԵՐ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Համագումարը, մարաջախտ Սթալինի ուղղուած իր հեռագրին համար ստացած է գոհացուցիչ և խանդավառող պատասխան մը:

Համագումարը փակուած է յունիս 25ի իրիկունը: Իր փակման ճառին մէջ, Նորընտիր Հայրապետ Վեհափառ Գէորգ Զ. միջի սյուց ըսած է. «ԿՕՐՀՆԵՄ ՌՈՒՍ ՄԵՍ ԱԶԴԸ ԵՒ ԱՆՈՐ ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՐԱՋԱԽՏ ՍԹԱԼԻՆԸ, ՈՐ ՈՉ ՄԻԱՅՆ ԲԱՑԱԻ ՄԵՐ ԵՊԵՆԵՏԻՆԵՐԸ, ԱՅԼԵԻ ԽՐՍՏՍՏԱՆԻ ԼՍՅՆԱՅՆԵԼ ՄԵՐ ԵՐԿԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ»:

## ՏԱՍԸ ՆՈՐ ԵՊԻՍԿՈՊՈՒՆԵՐ

Նորած Հայրապետը հանդիսաւոր պատարագ մատուցած է (Վեհափառին առաջին պատարագը) յունիս 1ի կիրակին, և Կաթողիկոսս ձեռնադրած է տասը վարդապետներ՝ որոնցմէ մէկը՝ Երուսաղեմի Հայոց Պատրիարք Ամեն. Կիւրեղ ծայր. վարդապետը, իսկ միւսը Հիւսիսային Ամերիկայի առաջնորդ Գեր. Տիրան վարդապետ:

## ՊԱՏԳԱՄԱՆՈՐՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԴԱՌՆԱՆ

Համագումարը վերջացած ըլլալով, պատգամաւորները սկսան վերադառնալ: Քանքմէի պատգամաւորներ, որոնց մէջ են Ընկ. Մարիան, է. Բարազեան, Պետրոս Թերզեան, Ճիմ Չանգալեան, Երեւանէն օգանաւով հասած են Թեհրան, անցեալ երեքշաբթի, յունիս 3ին:

Անգլիոյ պատգամաւորները, Տք. Իւթիւճեան և Պ. Ս. Քիւրքճեան, Թեհրանէն օգանաւով ճամբայ ելան դէպի Գահիրէ: Պ. Քիւրքճեան ուղղակի գնաց Գահիրէ, իսկ Տք. Իւթիւճեան կանգ առաւ Պաղեստին և շարժ վիշեր հասաւ Պէյրութ, իր բարեկամները տեսնելու և այսօր, երկուշաբթի, իր ճամբան շարունակելու մտադրութեամբ:

Իրենց հետ Թեհրան հասնող պատգամաւորներուն մնացեալ խումբը՝ 19 հոգի, փոխադրութեան միջոցի կը սպասեն դէպի իրենց երկիրները վերադառնալու համար: Յաջորդ օգանաւային սպասարկութիւնը շարժ օր էր, ըստ յարգելի Տօքթէօրին, որով եղիպտոսի պատգամաւորները՝ Տիրաք Ճանիկ Չազըր, Էօժէն Բարազեան և Սրբաշանը չկը յուսային վերադառնալ Գահիրէ. նոյնպէս Լիբանանի և Սուրիոյ պատգամաւորները կը սպասուին ամէն օր:

Տօքթ. Իւթիւճեան մեծ խանդավառութեամբ կը խօսի Պատգամաւորական Ժողովի աշխատանքներուն և ձեռք բերած արդիւնքներուն մասին ինչպէս

ZARTONK | July 10, 1945

նաև Հայաստանի անկարագրելի վերելքի մասին, բազմաթիւ մարդերուն մէջ:  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ  
Այժմէն իսկ ապահոված ենք էջմիածնի ազգային եկեղեցական Համագումարին աշխատանքներուն ամբողջական ատենադրութեանց պատճէնը, և մեր յաջորդ թիւէն սկսեալ պիտի հրատարակենք զայն, իր շատ շահեկան բովանդակութեանը պատճառով: